## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166-1-Հ1

## 01.10.2020Թ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166-1 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «04» 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը՝ ի դեմս հիմնադրամի ռեկտոր՝ Ե. Վարդանյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020թ հոկտեմբերի 1-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166-1 գլխավոր գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.03.21թ թիվ 353-Ն որոշումը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին գլխավոր Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 1.2 կետով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ սահմանել՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 200-րդ օրացուցային օրը ներառյալ:

1.1.2 Հաստատել Պայմանագրով սահմանված 2021թ համար ծառայությունների մատուցման նոր Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.1.3 Հաստատել Պայմանագրով նախատեսված 2021թ մատուցվող ծառայությունների համար վճարման նոր ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ |
| Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, | ք. Երևան, Տերյան 105 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011034957 | Հ/Հ՝ 1510001964940200 |
| ՀՎՀՀ 02698732 | ՀՎՀՀ 01506385 |
| **Գլխավոր քարտուղարի տեղակալ՝** | **Ռեկտոր՝** |
| _________ **Վ. Գասպարյան** | _________ **Ե. Վարդանյան** |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) |

**Հավելված N 1**
*« 23 » 04 2021թ. կնքված*
*ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166-1-Հ1 ծածկագրով համաձայնագրի*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Ծառայության | | | | | | ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ենթակա է գնման 2021 թ | | Մատուցման | |
| | | Գնման առարկա է հանդիսանում | | Քանակը | Գինը | Ըստ օբյեկտի հասցեն | Ըստ օբյեկտի ժամկետը |
| | | | | | | Ըստ օբյեկտների | |
| 71241200/6 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում-1 | Նախատեսվում է իրականացնել **ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատիվանքի** վանական համալիրի ամրակայման, մասնակի վերականգնման և տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում, ծախսերի գնահատում ըստ Աղյուսակ N 2-ի (Նախագծի պատրաստում, ծախսերի գնահատում կատարելու համար ներկայացվող պահանջներ):Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝<br>ա) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,<br>բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,<br>գ) ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,<br>դ) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:<br>**Մշակված նախագծային փաստաթղթերը պարտադիր են լրամշակման՝ ըստ դրանց փորձաքննության եզրակացությունների** | դրամ | 1 | 4550000 | ՀՀ Վայոց Ձորի մարզ, Շատին համայնք | Համաձայնագրին ուժի մեջ մտնելու օրվանից 200-րդ օրացուցային օրը ներառյալ: |

ԱՂՅՈՒՍԱԿ 2՝ 2021 թվականին գիտանախագծային և նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայություններին ներկայացվող պահանջները

| | | | | |
|---|---|---|---|---|
| ...քիզային նախագիծ | համալիր հետազոտությունների արդյունքների եզրակացություններ, դրանց հիման վրա ամրակայման հնարավոր տարբեր մեթոդների վերլուծությամբ՝ խնդիրների լուծումների գիտական հիմնավորումներ /այդ թվում՝ լուծումների տնտեսական արդյունավետության/ | գծագրական մասը՝ ընթեռնելի մասշտաբով, հիմնական չափերի տեղադրմամբ, հիմնավորումների հստակ ներկայացում | համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ(այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում) | ներկայացնել ալբոմ՝ 2 օրինակ, էլեկտրոնային կրիչ և ցուցադրական նյութ (պաստառ) |
| ...ացման աշխատանքների կազմակերպման հիմնադրույթներ | նախատեսել ծավալների իրականացման, կազմակերպման դրույթները և հերթականությունն ըստ ամիսների | ըստ նորմատիվ պահանջների | | |
| ...րապետական մաս՝ ըստ ...ժեշտության /համաձայն ...ստատվածէսքիզի/ | Աշխատանքային գծագրերի մշակում, ճարտարապետական, կոնստրուկտորական, ինժեներական, գլխավոր հատակագիծ՝ուղղաձիգ հատակագծմամբ, աշխատանքների կազմակերպման նախագիծ | Ըստ նորմատիվ պահանջների՝ գծագրական մասը ընթեռնելի մասշտաբով, չափերի տեղադրմամբ, բացատրագիր (յուրաքանչյուր միջամտության ձևի վերաբերյալ), | համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ(այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում) | ներկայացնել ալբոմ՝ 4 օրինակ, էլեկտրոնային կրիչ՝ 1 օրինակ,թղթարկված, հայերեն և ռուսերեն լեզուներով |
| ...ուկտորական մաս/ ըստ ...ժեշտության ՝համաձայն ...ստատված էսքիզի/ | | | | |
| ...խահաշվային մաս | ֆինանսական գնահատում ՀՀ դրամով | կազմել MicrosoftExcel ծրագրով, բանաձևերի կիրառմամբ, GHEAGrapalat տառատեսակով ըստ նորմատիվ պահանջների | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

_______________Վ.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

_______________Ե. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 23 » 04 2021 թ. կնքված*
*ՀՀԿԳՄՍՆԳՀՃԶԲ-20/166-1-Հ1 ծածկագրով համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| ...վերով ...ատեսվ ...ած ...աբաժնի ...մարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | Ընդամենը |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր (մինչև 30-ը) | |
| 1 | 71241200/6 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում-1 | 910000 | 910000 | 910000 | 3185000 | 3185000 | 3185000 | 4550000 | 4550000 | 4550000 | **4550000** |

*...րման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
____________Վ.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
____________Ե. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**
Բուզանդի փ 87շ 85
Հեռախոս`
Ֆաքս`
Էլ. փոստ`csd@araratbank.am

Տպված է`20/04/2021 09:44 (UTC+04:00)

# Բյուջետային փոխանցում N 000848

| | | | |
|---|---|---|---|
| Ամսաթիվ | **19/04/2021** | Նույնացուցիչ | **aa453c92-f5d1-4e12-acd8-b2dd9e7786b4** |
| Հաշիվ | Շահառուի հաշիվ | Գումար | |
| **1510001964940200** | **900008000664** | **AMD** | **1,820,000.00** |
| Վճարողի անվանում | **«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅ** | | |
| Վճարողի բանկ | **ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** | | |
| ՀՎՀՀ | **01506385** | | |
| Տարածաշրջանի/ՀՏ կոդ | **23** | | |
| Շահառուի անվանում | **Կենտրոնական գանձապետարան** | | |
| Գումարը բառերով | **Մեկ միլիոն ութ հարյուր քսան հազար դրամ** | | |
| Նպատակ | **Պայմանագրի կատարման ապահովում, ծածկագիր ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166-1** | | |

| | |
|---|---|
| Ստորագրող | Քրիստինե Հարությունյան |
| Ստորագրության կարգ | I, II |
| Ամսաթիվ | 19/04/2021 16:11:44.000 |
| Սարքի անվանում | DIGIPASS GO ընտանիքի սարք |
| Սարքի սերիալ N | 3592674239 |
| Ստորագրություն | 619928 |

**Կատարված է բանկի կողմից**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**
Բուզանդի փ 87շ 85
Հեռախոս՝
Ֆաքս՝
Էլ. փոստ՝ csd@araratbank.am

Տպված է՝ 20/04/2021 09:43 (UTC+04:00)

# Բյուջետային փոխանցում N 000847

| | | | |
|---|---|---|---|
| Ամսաթիվ | **19/04/2021** | Նույնացուցիչ | **b81daecb-91a8-48b5-8269-587b27aba73e** |
| Հաշիվ | Շահառուի հաշիվ | Գումար | |
| **1510001964940200** | **900008000698** | **AMD** | **682,500.00** |

| | |
|---|---|
| Վճարողի անվանում | **«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅ** |
| Վճարողի բանկ | **ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** |
| ՀՎՀՀ | **01506385** |
| Տարածաշրջանի/ՀՏ կոդ | **23** |
| Շահառուի անվանում | **Կենտրոնական գանձապետարան** |
| Գումարը բառերով | **Վեց հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր դրամ** |
| Նպատակ | **Համաձայնագրի որակավորման ապահովում, ծածկագիր ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/166-1-Հ1** |

| | |
|---|---|
| Ստորագրող | Քրիստինե Հարությունյան |
| Ստորագրության կարգ | I, II |
| Ամսաթիվ | 19/04/2021 16:11:44.000 |
| Սարքի անվանում | DIGIPASS GO ընտանիքի սարք |
| Սարքի սերիալ N | 3592674239 |
| Ստորագրություն | 619928 |

**Կատարված է բանկի կողմից**